№ 33 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 21 — 1904 — ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 21 № 33

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

## «ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

*Մարտի 1-ից մինչև տարվայ վերջը կարժենայ ԻՆՆ ռուբլի։*

Դիմել Тифлисъ, редакція «Мшакъ».

*Այն անձինք, որոնք վճարել են մինչև մարտի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վաղօրօք յայտնելու այդ մասին խմբագրութեանը, որպէս զի լրագրի առաքումը չընդհատվի։*

*Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչէ կատարվում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայկական երեկոյթը Աստրախանում. Նամակ Նոր-Նախիջևանից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Հայ բողոքականները Թիւրքիայում.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղական գործավարութիւն.

## Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

Դիւքեր գրաւել և զօրքեր կենտրօնացնել պատերազմական բեմի զանազան տեղերում—ահա այն գլխաւոր հոգսը, որով զբաղվում են ներկայումս թէ Ռուսաստանի և թէ Եապօնիայի զինուորական բանակները։

Որքան թոյլ են տալիս եղրակացութիւններ անել հեռագրական և ուրիշ տեղեկութիւնները, ռուսաց զօրքը աշխատում է կարելիին չափ անմատչելի դարձնել Եալու գետի գիծը եապօնական զօրագնդերի համար և ապահովել այն ճանապարհները, որոնք կապում են Եալու գետը մանջուրական Մուկդէն և Գիրին նշանաւոր քաղաքների հետ։ Բռնած լինելով անցքերը և խոշոր ուղիները, ռուսաց զօրքը կարող է մեծ դժուարութիւններ ստեղծել եապօնական զօրագնդերի շարժման համար և ժամանակ վատնել իր զօրքերի թիւը մեծացնելու և յարձակողական արշաւանքներ կատարելու դէպի Կօրէայի խորքերը, որոնք ներկայումս եապօնացիների ազատ տրամադրութեան տակ են։ Միւս կողմից երկիւղ կրելով, որ մի գուցէ չինական զօրքերը շարժվեն դէպի Մանջուրիա և բարդութիւններ առաջացնեն, ռուսաց զինուորական վարչութիւնը միջոցներ է ձեռք առել ամրացնելու մի քանի տեղեր, որոնք գտնվում են չինական սահմանի վրա, շինելու պատնէշներ, փորելու խրամատներ և առհասարակ կազմակերպելու պաշտպանութեան ամեն տեսակ ձեռնարկութիւններ՝ լուրջ դիմադրութեան համար։

Երկաթուղին ամեն օր տանում է եւրօպական Ռուսաստանից դէպի Մանջուրիա մեծ թւով զօրքեր, միջին թւով 2000—2500 մարդ օրեկան։ Այն միջին տարածութեան վրա, որ բռնված է Բայկալեան լճով, շինված և պատրաստ է սի ժամանակաւոր երկաթուղի, որի ռէյլսերը դրված են լճի հատ և ամուր սառուցի վրա։ Լիճը սառած կը մնայ մինչև մարտի վերջը և մինչև այդ ժամանակ կաշտոնվի երկու հարիւր հազարի չափ մարդ փոխադրել դէպի Մանջուրիա։ Սակայն որպէս զի լճի սառուցը չը խախտվի չափազանց մեծ ծանրութիւնից, երկաթուղու կառքերը շարժվում են ոչ թէ ծանր լոկոմոտիվներով, շոգեշարժներով, այլ ձիերի միջոցով, ինչպէս ձիաքարշները, միայն թէ աւելի մեծ կազմութեամբ և ձիերի բազմութեամբ։

Ինչ վերաբերում է եապօնացիներին, նրանք աշխատում են իրանց ձեռքը գցել ապահով և կարևոր նաւահանգիստները և այնտեղից զօրք մտցնել թէ Կօրէայի և թէ Մանջուրիայի սահմանների մէջ։ Նրանք այժմ օգտվում են Չեմուլպօի, Փուզանի և Ցինամպօի նաւահանգիստներից՝ անդադար զօրք թափելու Կօրէա, որտեղ նրանք հաստատվել են Սէուլում և Պհէնեան քաղաքներում։ Պհէնեանը գտնվում է Սէուլի և Եալու գետի մէջում և յարմարութիւններ ունի պաշտպանողական դիրք բռնելու ռուսաց զօրքերի յարձակումների դէմ։ Միւս կողմից Եապօնիան աշխատում է Մանջուրիայի Արևելեան ծովափերից, այն է Պօսիետի, Պրակսինի և այլն ծովածոցերից զօրք իջեցնել ցամաքի վրա և կարողացել է արդէն մի քանի հազար մարդ մտցնել Մանջուրիայի մէջ։ Այդ ծովածոցերը գտնվում են Վլադիվոստոկի մօտերքում և կարող են ապագայում ծառայել եապօնացիների նրբատակներին, եթէ միայն եապօնական նաւատորմը պատրաստ կանգնած կը լինի ամեն մի րոպէ կուռելու ռուսական նաւատորմի դէմ, որ գտնվում է Վլադիվոստոկում։ Եապօնացիները փորձեր արեցին ափ իջնելու և Պորտ-Արտուրի շրջակայքից, բայց մինչև այժմ աջքի ընկնող աջողութիւն չեն ունեցել։ Չինական սահմանների կողմից եապօնացիների համար առ այժմ, քանի որ Չինաստանը չէզոք է իրան պահում, անկարելի է մուտք գործել Մանջուրիայի մէջ։

Ցամաքային դէպս, հակառակ կողմերի բանակները դեռ ևս հեռու են միմեանցից, ուստի լուրջ ընդհարումների մասին խօսք լինել չէ կարող։ Այդ պատճառով չը պէտք է նշանակութիւն տալ հասարակութեան մէջ ամեն օր պտտող լուրերին, որ իբր թէ մի քանի տասնեակ հազար զինուորներ այս ու այն կողմից կոտորվել են կամ գերի են ընկել։ Այդ լուրերը երևակայութեան արդիւնք են կամ հնարվում են դիւրահաւատների մէջ տրպաւորութիւն գործելու նպատակով։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ

*((Նամակ Աստրախանից)*

Փետրվարի 6-ին տեղիս հայոց օրիորդաց ուսումնարանի դահլիճում, նոյն ուսումնարանի օգտին, մի խումբ անձերի ջանքերով տեղի ունեցաւ հայկական երեկոյթ, որ անցեալ տարվանից սկսած կարծես սովորական դարձաւ Աստրախանում։

Օրիորդաց ուսումնարանի ընդարձակ դահլիճը գեղեցիկ կերպով զարդարված էր դէկօրացիաներով։ Դահլիճի ճակատը ներկայացնում էր Անիի աւերակները, որոնց երկու անկիւններում շինված էին քիօսկներ, որոնցից մէկում վաճառվում էին ազգային գործիչների պատկերները, իսկ միւսում ծաղկեփնջեր, կնիֆէտաի և սէրպանտին։ Դահլիճում ածում էր սերբ երաժիշտների մի փոքրիկ խումբ։ Կից սենեակում բուֆէտն էր, որտեղ վաճառվում էին թէյ և քաղցրեղէն։ Իսկ շինութեան առաջին յարկում մի սենեակ զարդարված էր զուտ կովկասեան ճաշակով, որտեղ վաճառում էին խորոված և ածում էր կովկասեան երաժիշտների չորս հոգուց բաղկացած խումբը. մի ուրիշ սենեակ էլ ներկայացնում էր եւրօպական սալօն։

Այս երեկոյթը մի աւելորդ անգամ ապացուցեց, որ ամեն անգամ, երբ գործի մէջ կը մտնեն անշնորհք անձեր, երբ մարդիկ փոխանակ գործին ծառայելու՝ կառաջնորդվեն զուտ ցուցամոլական և էժան դափնիներ վաստակելու ձգտումներով և, վերջապէս, երբ գործին միանգամայն անձեռնհաս անձեր կը յանդգնեն ստանձնելու հասարակութեան մտաւոր և էսթէտիկական պահանջներին բաւարարութիւն տալու գործը՝—միշտ տուժողը կը լինի հասարակութիւնը, որի ժամանակը, տրամադրութիւնը և դրպանը շահագործված կը լինեն՝ թէկուզ բարեգործական նպատակով։

Երեկոյթի ծրագիրը, որը կազմված էր գրական-երաժշտական բովանդակութեամբ, թէև գոհացուցիչ էր, սակայն ծրագրում մասնակցողների մի մասը շատ անբարեխիղճ կերպով վերաբերվեց դէպի այն գործը, որի համար նրանք հաւաքել էին երեկոյթի դահլիճում 3—4 հարիւր մարդ։ Նախ ծրագրի բովանդակութիւնը իրագործվեց խառն ի խուռն, այնպէս որ տված ծրագիրներով բովանդակութեանը հետևել անհնարին էր։ Տ. Ալաջալեան և * * բոլորովին չը կատարեցին իրանց ստանձնած համարները և երեկոյթի ղեկավարները պարտք չը համարեցին դրա պատճառը յայտնել ներկայ եղող հասարակութեան։ Պ. Խաչատրեան, որը Բաֆֆիի «Դաւիթ-Բէկ»-ից մի հատուած էր կարդալու ուրիշների հետ՝ նոյնպէս չը կատարեց իր ստանձնածը։ Պ. Ց. Մեղնիկեան փոխանակ ծրագրի համաձայն Տանի «Իմ երգը» կարդալու, վերցրեց Ծատուրեանի գիրքը և այնտեղից մի ոտանաւոր կարդաց։

Սակայն ամենից թոյլը «Մայր-Արաքսի» երգն էր, որ դուէտ երգեցին օր. Գ. Աղամեան և պ. Յ. Մեղնիկեան. այսպէս մինչդեռ, սրանցից երկրորդը սկսեց «Մայր-Արաքսի ափերով...», օր. Աղամեան սկսեց «Արաքս ինչու ձկանց հետ...» կտորը, այնպէս որ սկսեցին իրար խառնել, խանգարել և ընդմիջել։ Երգը այնքան անախորժ տպաւորութիւն թողեց, որ հասարակութիւնը անհամբեր սպասում էր, թէ երբ կը վերջացնեն երգի մի տունը, որ ազատվի այդ անախորժ երգեցողութիւնից։

Սակայն մասնակցողների մէջ կային և այնպիսիները, որոնք բաւականութիւն պատճառեցին հասարակութեանը։ Պ. Յ. Փարեմուզեանի կազմած երկսեռ քառաձայն խումբը գեղեցիկ կերպով երգեց մի քանի ազգային-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԳԻՒՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆ

*Մեր գիւղական տանուտէրները, նրանց օգնականներն ու դատաւորները իրանց գործունէութիւնը արդիւնաւէտ դարձնելու համար պէտք է ամենից առաջ որոշ կարգ ու կանոն մտցնեն գիւղական գործավարութեան մէջ, գիւղական վարչական ու դատարանական մեքենային պէտք է կանոնաւոր ընթացք տան ու այդ ընթացքը խիստ օրինականութեան ու օրինաւորութեան սահմաններում պահեն։ Առանց դրան նրանք գործ շինել չեն կարող. գիւղը իր հասարակական ու մասնաւոր գործերով կը մնայ միշտ քաոսական դրութեան մէջ, միշտ ենթակայ կամայականութիւնների ու ապօրինութեան։*

*Մեր գիւղերը իսկապէս չունեն կանոնաւոր կառավարութիւն, կարգին գործավարութիւն, թէև ունեն շատ լաւ, շատ խելացի ու մարդասէր կանոնադրութիւն, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաէվիչի փոխարքայութեան օրով կազմված։ Գիւղական վարչական մեքենան, շնորհիւ գիւղական անկիրթ, գռեհիկ, անձեռնհաս պաշտօնեաների, գործում է, շատ ու շատ հաղուագիւտ բացառութեամբ, անբաւարար, վատ. ամեն բան գիւղում անկարգ է, անկանոն, անփոյթ. գիւղական կառավարութիւնը շատ տեղերում անունով միայն գոյութիւն ունի. գիւան (կանցելեարիա) ասած բանը իր օրինաւոր գործավարութեամբ անյայտ է ընում, ևս առաւել անյայտ է գիւղական արխիւը։ Պաշտօնական թղթերը, դոկումենտները, մատեաններն ու համախօսականները ընկած են լինում այս կամ այն պաշտօնեայի մօտ, գտնվում են նրա տան ծալքի մէջ, կապերտի տակին կամ հէնց նրա փափախի ծալում. հետևանքը այն է լինում, որ շատ բան կորչում է, շատ պաշտօնական թղթեր, հաշուեմատեաններ, մուտքի ու ելքի, ևս առաւել մուտֆի հաշուեմատեաններ, դիտմամբ կամ պատահմամբ անհետանում են ու այդպիսով մեծ անախորժութիւններ ու վնասներ առաջ բերում։*

*Պատահել են դէպքեր, երբ մի քանի հարիւր ռուբլի արժեցող հողային յատակագծեր (земельные планы) են կորել անփոյթ պահելու շնորհով, ու գիւղերը ստիպված են եղել նորերը գնել։ Ամենից շատ սովորական բան է հաշուեմատեանների անհետանալը, որը մի տեսակ քրոնիկական ախտի բնաւորութիւն է կրում մեր գիւղերում։ Երբ նրանց երևան գալը ձեռնտու չէ գիւղական գործիչներին, նրանք շատ հեշտութեամբ կորչում են. համայնական ժողովում շատ համառօտ կերպով յայտնում են, որ տնեցիք «դաւթարը» անպէտք թղթի տեղ ընդունելով նրա միջոցով վառել են թոնիրը։*

*Գիւղական ամեն մի պաշտօնեայ, նոյն իսկ ամենատգորինը, գլխիը իրան իրաւունք է համարում իր տանը պաշտօնական թղթեր պահել. այդ մի տեսակ պատիւ, իշխելու, ազդեցիկ լինելու միջոց է համարվում. ինչպէս կարելի է մարդը գիւղի պաշտօնեայ, գիւղի «մեծաւոր» լինի ու իր ձեռքին որ և է նշանաւոր թուղթ չունենայ, իր տան ծալքում մատեան կամ համախօսական չունենայ պահած։ Ոչ միայն պաշտօնատար անձինք, այլ նոյն իսկ նրանք, որոնք մի ժամանակ եղել են պաշտօնում, կամ առանց պաշտօնի էլ ազդեցիկ են գիւղում, «իշխան» են կամ «պաչօտնի», իրանց մօտ պահած ունեն հին դոկումենտներ, մատեաններ, պաշտօնական գրքեր ու գրութիւններ, որոնք յաճախ պէտք են գալիս ու եթէ կորած են յայտնվում, նոր ծախսերով ու մեծ դժուարութիւններով են ձեռք բերվում ընդհանուր պաշտօնական հաստատութիւններից։ Յաճախ էլ կարևոր թուղթը, դոկումենտը, եթէ գտնվում է որ և է «իշխանի» մօտ, մեծ դժուարութիւններով է նրանից դուրս գալիս. խնդրում, աղաչում են նրան, գինի—արաղ են խմացնում, որ կարևոր թուղթը նա բարեհաճի հանել. պատահում է, որ ամբողջ գիւղը աղերսում է այդպիսին, որ այս ինչ թուի «դաւթարը» կամ այլ դոկումենտը դուրս հանի նա։ Այդպիսի միջոցներով գիւղի ազդեցիկները ձգտում են պահպանել ու զօրեղացնել իրանց ազդեցութիւնը։ Այդպիսով գիւղի թէ վարչական և թէ դատարանական գիւանի և արխիւի թղթերը գտնվում են սրա-նրա ծալքում, օճառքում, գրպանում, փափախի ծալում, և այդ բանը, որը արտաքուստ այնքան էլ մեծ չէ երևում, ծնում է շատ չարիքներ մեր գիւղական ժողովրդի կեանքում։*

*Օրինակ, գիւղական դատարանը ո և է գործի մասին կայացրել է որոշ վճիռ ու արձանագրել իր մատեանում. գործն այդպիսով օրինաւոր վախճան է ստացել։ Անցնում է մի քանի տարի. նոյն գործը նորից յարութիւն է առնում. նորից սկսվում են տուր ու դմբոցը, նորից սկսվում է իրար տուն քանդելը։ Նա, որը գոհ է դատարանի վճռով, յայտնում է, որ այս ինչ թուին գործի մասին յայտնի վճիռ եղել է, այդ պատճառով նրա իրաւունքը օրինաւոր է. հակառակ կողմը պնդում է, որ սուտ է, ոչ մի վճիռ չի եղել, դատարանի «դաւթարում» ոչինչ չը կայ գրած։ Գնում են «դաւթարը» փնտռելու, հարցնում են նախկին դատաւորին նրա «գովրի դաւթարի» ուր գտնվելու մասին. նա կամ կորցրած է լինում, կամ մոռացած ուղղակի ուր գտնվելը, կամ դիտմամբ «տեսնված» լինելով ում հետ հարկն է, թագցնում իր մօտ գտնվող հին «դաւթարը», ու այդպիսով վիճելի գործը կրկին աղբիւր է դառնում նոր անախորժութիւնների ու փոխադարձ թշնամութեան և վնասների։ Գիւղական դատարանի արձանագրութիւնների մատեանը տարվայ վերջում ըստ օրէնքի ուղարկվում է գաւառական վարչութեան արխիւը. նրանց պատճէնների մատեանն էլ պէտք է գիւղական*

ժողովրդական երգեր, ինչպէս, օրինակ, «Ալա-գեազ», «Ջան-գիւլում» և այլն։ Ջութակահար պ. Ադամսկիյ հիանալի ածեց Սարասատէի «Անդալուզուհին» և վերջապէս օր. Ց. Բախրեանց շատ աջող կարդաց Ծատուրեանից երկու բանաստեղծութիւն։

Երեկոյթում կարելի է ասել չը կային կարգադրիչներ. այսպէս, օրինակ, գիշերվայ ժամի 12-ի մօտ առաջին յարկում պատրաստած խորոված-ից թէ դահլիճը և թէ միւս բոլոր սենեակները լցվեցան ծխով և հասարակութեան յայտնած տրտունջներին՝ օդանցքները բաց անելու, բաւարարութիւն տուող չը կար. երեկոյթը ղեկավարներից իւրաքանչիւրը մէկը միւսի մօտ էր ուղարկում գանգատվողներին։

Առհասարակ երեկոյթը թողեց վատ տպաւորութիւն և նեբիկայ եղող հասարակութեան մեծամասնութիւնը կը խոստովանի, որ երեկոյթից միակ յիշատակ կը մնայ նրա ծրագիրը թղթի վրա, որ այնքան շքեղ կերպով տարել էին տուել երեկոյթը կազմակերպողները, կարծես նախատեսնելով, որ այլ յիշատակ չը պիտի թողնեն հասարակութեան մէջ այդ երեկոյթից։

Խանջամեցի

## ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ

Փետրվարի 10-ին

Նոր-Նախիջևանն ունի մի գողտրիկ թատրոնական շինութիւն, որին Անդրկովկասի ամեն մի գաւառական քաղաքացի տեսնելիս պէտք է նախանձվի. նա ունի և մի գողտրիկ, բեմը սիրող դերակատարների խումբ. սա մի կողմից, այս տարի հիմնված հայ դրամատիկական ընկերութիւնը միւս կողմից—հայ հասարակութեան հովանու տակ, առաջ են տանում դեռ ևս նոր սկսած գործը մեծ աջողութեամբ։

Այստեղ սիրող-դերակատարը բեմ է դուրս գալիս ոչ թէ որպէս մի հասարակական գործ կատարելու—որ և է մունաթով, այլ հէնց իր անձնական հաճոյքի համար։ Պէտք է լինել Նախիջևանում և տեսնել, թէ ինչպէս փոքր նշանակված օրը (համարեա ամեն օր) ամեն մի սիրող-դերակատար՝ մէկը տնից, մէկը զբօսնավայրից, մէկը հիւր գնացած տեղից շտապում է դէպի թատրոն—կարծես դէպի իր պաշտօնատեղին, նշանակված ժամին փորձին ներկայ լինելու, և որպիսի ուշադրութեամբ ու առանց որ և է դժգոհութեան լսում են բեժիսսօրի տուած ցուցմունքները—և ինչն է այստեղ գովելի, որ գործի մէջ մտած ու նոյն եռանդով աշխատում են հասարակութեան բոլոր խաւի մարդիկ, առանց որ և է խորութեան։ Այո, Անդրկովկասից եկած մի հայի համար այս բոլորը նոր է և օտարոտի... բայց պիտի խոստովանել, որ միմիայն սրանումն է գործի այնքան աջող առաջ գնալու գաղտնիքը. թող չը զարմանայ ընթերցողը, եթէ ասեմ թէ Նոր-Նախիջևանն ունի քսան-հինգական տարվայ սիրող-դերակատարներ—պ.պ. Կ. Թիթրեան, Այլաջլեան։

Խօսք չը կայ, որ տեղիս դեռակազմ դրամատիկական ընկերութիւնը, ունենալով իր ձեռքի տակ սիրողների մի այսպիսի խումբ, պէտք է բաւականանար միմիայն մի դերասան-դերասանուհով, որ և նա հրաւիրելով ամուսիններ Արմենեաններին, թէ որպէս դերասանական ոյժեր և թէ պարոնին որպէս բէժիսսօր, բաւականութիւն է տալիս հայ հասարակութեանը այն աստիճան, որ թատրոնը միշտ լիքն է լինում, չը նայած, որ ներկայացումները լինում են ամեն շաբաթ։

Այսպիսի աշխոյժով գործին կպչելը պատիւ է բերում թէ տեղական դրամատիկական ընկերութեան, թէ սիրողներին և թէ ամուսին Արմենեաններին, որոնք մի հոգի դառած առաջ են տանում գործը։

Տեղիս սիրողների խումբը ընդունակութեան կողմից յետ չէ մնում դերասանական խմբից։ Ես եղել եմ երեք ներկայացումների և հեռացել եմ լաւ տպաւորութիւնների տակ։

Գալով ամուսին Արմենեաններին, պէտք է ասեմ, որ ես շատ էի կարդացած գովասանքներ լրագիրներում նրանց խաղի մասին, բայց իմ ստացած տպաւորութիւնը այլ է թէ մէկի և թէ միւսի վերաբերութեամբ։ Պ. Արմենեանը և տիկ. Դուրեան-Արմենեանը անկասկած բեմական ոյժեր են մեզանում, բայց կրկնապատիկ լաւ ոյժեր կը լինէին, եթէ պ. Արմենեանը որքան հեռևում է իր խաղին, նոյնքան հետևէր և իր ամպլուային. դերասանը կորցնում է իր թէ ոյժը և թէ արժէքը հասարակութեան աչքում, երբ նա դուրս է գալիս ամեն մի պատահած դերում։

Տիկ. Դուրեան-Արմենեանը կարող է լաւ ոյժ լինել, եթէ անտարբեր մնալով գրված գովեստներին, աւելի լուրջ ուսումնասիրէ իր դերը և հեռու մնայ չափազանցութիւնների մէջ ընկնելուց, բայց ընդհանուր առմամբ տիկնոջ խաղը տպաւորիչ է։

Պ. Արմենեանը իր բենեֆիսին, փետրվարի 2-ին, դուրս եկաւ իր ամպլուային համապատասխան դերում (Կոստանդին—«Թագի համար»)։ Տեղիս հասարակութեան մի մասը յարգեց պարոնին՝ նուիրելով ոսկեայ ժամացոյց, դափնեայ պսակ և մի 100 ռուբլիանոց բենատ. իսկ մի մասն էլ բուռն ծափահարութիւններով դրդդացնում էր թատրոնը, որն այդ օրը լիքն էր ամբողջովին։

Փետրվարի 22-ին խաղալու են «Սանդուխտ» հինգ գործողութեամբ պ. Գ. Զուբարի նոր հեղինակած պատմական դրաման, և այդ օրը Նոր-Նախիջևանը տօնելու է իր բեմական սիրողներից մէկի՝ պ. Կ. Թիթրեանի բեմական գործունէութեան 25-ամեայ յօբելեանը։

Մ. Մնջոյեան

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 13-ին

Ինչպէս արդէն յայտնի է, անցեալ ամսի 26-ին, Հայ դրամատիկ ընկերութեան խումբը տօնեց իր մի անդամի՝ դերասան Մ. Ադայեանի բեմական գործունէութեան 25-ամեայ յօբելեանը։ Պարոնը խրախուսանք ստացաւ ամենից եւս, նրան շատ օգնեց նախ եւ առաջ հայ եւ ռուս մամուլը. դա մի ուրախալի փաստ է, որ անհրաժեշտ է շեշտել. այն օվացիաներն ու ընդունելութիւնը, որ տեղի ունեցան, պիտի վերարդել

զխաւորապէս մամուլի ազդեցութեան. ապա իր բարեկամներն էլ արին այն, ինչ կարող էին։

Այժմ հարցը վերաբերում է այն բանին թէ, այդ բոլորից յետոյ, ինչու պիտի ընկերութեան վարչութիւնը դիմէ անարդարացի միջոցի եւ դրանով մասամ՝ փչացնէ լաւ գործի ամբողջութիւնը... Բանը նրանումն է, որ վարչութիւնը երկու շաբաթի չափ սպասելուց յետոյ, սեզոնի վերջին, վերցրեց ու ներկայացման երեկոյի հասոյթը կիսեց Ադայեանի հետ։ Ի՞նչ կասէք սրան. օգուտ բան է, այնպէս չէ։ Եթէ հարցնենք առողջ դատողութեան, նա մեզ առանց այլ եւ այլութեան կասէ, որ դա երբէք էլ լաւ բան չէ, այլ դատապարտելի եւ յանդիմանութեան արժանի մի բան. մարդը տօնէ իր 25-ամեայ բեմական գործունէութիւնը եւ եկամուտի (ծախսը հանած) կէսը ընկերութիւնը վերցնէ։ Պատճառն ինչ է. ով է մեռել, ում տունն են փնտրում։ Եթէ ընկերութիւնը մնասներ է կրում, կարող է հանգանակութեամբ կամ այլ միջոցով ծածկել այն. իսկ չտալ Ադայեանի վրին եւ կորզել, այո, կորզել նրա ընտանիքից 300 ռուբլու չափ մի կլորիկ գումար, համամանվեցէք, պարոններ, որ այդ գործողութեամբ դուք անպատիւ էք անում ընկերութեան բարի անունը։ Այսպէս թէ այնպէս, քանի որ, ինչպէս իմացանք, այդ հարցը դրվելու է առաջիկայ ընդհանուր ժողովի առաջ, միանգամայն ցանկալի է, որ այդ հարցը վնասի յօգուտ Ադայեանի. դրանով ընկերութիւնը փչացրած չի լինի լաւ գործի աջողութիւնը... եւ կատարած կը լինի իր պարտաւորութիւնը։

Գ. Բարուրեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսում նոր բացված մրգաբուծական ընկերութիւնը դիտաւորութիւն ունի շուտով լոյս ընծայել մի քանի բրօշիւրներ ծառերի և բոյսերի հիւանդութիւնների և նրանց դէմ մաքառելու միջոցների մասին։ Բրօշիւրները կը լինեն ռուսերէն և տեղական լեզուներով։ Որքան յայտնի է, երկու բրօշիւր արդէն պատրաստ են և շուտով տպագրութեան կը յանձնվեն։

Անցեալ օրը մենք հաղորդել էինք Թիֆլիսի պօստատնում եղած ժամացոյցների և մի ուրիշ գողութեան մասին։ Այժմ արդէն գողը յայտնվել է։ Դա մի 10 տարեկան վրացի երեխայ է—Բօչարաշվիլի անունով՝ երկուշաբաթ առաջ վրաց ազնուականների դպրոցից արձակված իբրև փչացած երեխայ, գողացել, բաց է արել և առատօրէն բաժանել է իր ընկերներին ոսկէ ժամացոյցները։ Մէկ հատ տուել է փողոցում բուլկի ծախողին և 4 հատ պիրօժնի առել, միւսները Սալդատսկի բաղարում սրան-նրան ծախել է հատ 1—2 ռուբլով։ Սրանից ժամացոյց ստացող ընկերներից մէկի ծնողները յայտնել են ոստիկանութեան եղելութիւնը։ Երեխան անյայտացել է, իսկ ժամացոյցների մի մասը գտնվել է։

Ախալքալաքից մեզ հաղորդում են, որ այնտեղի քաղաքային վարչութեան մէջ միտք է ծագել խնդրելու պատշաճաւոր իշխանութիւնից թոյլտութիւն նախկին հայոց-եկեղեցական դպրոցի գրադարանից մնացած գրքերով բանալ մի քաղաքային գրադարան-ընթերցարան։ Ցանկութիւն կայ շուտով կանոնագրութիւն մշակելու։

Մի ամենահասարակ թուղթ ձեռք բերելու համար, ինչպէս է գաւառական վարչութիւնից անցագիր ստանալը, գիւղական տանուտէրի վկայականը գիւղացու լաւ վարքի ու հարկերի վճարման մասին, խեղճ գիւղացին ստիպված է լինում օրերով բանից-գործից ընկնել ու տանուտէրի եռևից դէս ու դէն քաշ գալ, յաճախ գինի-արաղ առնել նրա համար կամ մի թեթև «աշնահամբոյր» տալ (ոչ պակաս մի ռուբլուց), որպէս զի ձեռք բերի վկայականը, որի համար գիւղական գրագիրը ևս իր «աշնահամբոյրը» կամ իր բաժին գինի-արաղն է ուզում...

Գիւղացին ստանում է պօստից փողի յայտարարութիւն. որդին հեռու քաղաքից փող է ուղարկում տան համար։ Տանուտէրը յայտարարութեան վրա պէտք է վկայի նրա անձնաւորութիւնը, որ նա կարողանայ փողն ստանալ։ Այդ երկտող բանն էլ գիւղացուց պահանջում է օրեր, գինի-արաղի զոհաբերութիւն ու տանուտէրական «աշնահամբոյր»։ Այդ զոհաբերութիւնների չափը կախված է ուղարկված գրամի քանակից. եթէ գրամը շատ է, բնականաբար շատ բան էլ պոկվում է գիւղացուց։ Մի անգամ մի գիւղում տանուտէրը պահանջում է իր վկայութեան համար մի գիւղացուց, որը պօստից պէտք է ստանար 300 ր., տասն ռուբլի «աշնահամբոյր» ու մի վեդրօ գինի։ Երկար աղերսանքներից ու միջնորդութիւններից յետոյ գիւղացուն աջողվում է գոհացնել «քեօխվին» երեք ռուբլով ու մի բաթման (կէս վեդրօ) գինով։

Բագուի քաղաքին հարկաւոր լինելով փոխառութեան դիմել, զրաւ դնելով իր անշարժ կայքերը, այդ պատճառով դիմում է Թիֆլիսի քաղաքային վարչութեան խնդրելով յայտնել իրան, թէ ինչ թղթեր, դօկումենտներ են հարկաւոր ներկայացնելու դրամական հիմնարկութիւններին և առհասարակ թէ ինչ ձևականութիւններ են պահանջվում փոխառութեան ժամանակ։

—

Յիշեցնում ենք մեր Թիֆլիսի ընթերցողներին, որ այսօր, շաբաթ, Թիֆլիսի արտիստական թատրոնում պէտք է տեղի ունենայ ներկայացում համերգի և կենդանի պատկերների բաժիններով Թիֆլիսի հայոց Բարեգործական Ընկերութեան օգտին։

—

«Նիւ-Եօրկ-Հերալդ» ամերիկական լրագրի Պետերբուրգի թղթակիցը պատմում է մի վերին աստիճանի սրտաշարժ դէպք։ Երկու զօրաբաժին մեկնում էին Նովգորոդից դէպի Մանջուրիա։ Ուղեկցող գիւղացիները հանում էին իրանց ոտերից թաղիքէ տաք կօշիկները, տալիս էին զինուորներին՝ ասելով. «եղբայրներ, ձեր ճանապարհը երկար է. դուք պէտք է տաք հագնվէք»։ Իսկ իրանք բոբիկ ոտերով՝ ձիւնի ու սառոյցի վրայով տուն էին դառնում»։

—

Ախալցխայի քաղաքային խորհուրդը վճռել է իր պահեստի դրամագլխից նուիրել նաւատօրմի զօրացմանը 500 ր. և թոյլտուութիւն խնդրել քաղաքում ստորագրութիւն բանալու Հեռաւոր Արևելքում վիրաւոր և հիւանդ զինուորների օգտին։

—

«Рус. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ մամուլի և գրաքննութեան օրէնքների § 154-ի հիման վրա՝ ներքին գործերի մինիստրը 8 ամսով դադարեցրեց «Юго-Западная Недѣля» և 3 ամսով «Енисей» լրագիրները։ Իսկ Ֆինլանդիայի մամուլի գլխաւոր վարչութիւնը մի ամսով դադարեցրել է Ուլէաբօրգ քաղաքի «Լուխի» թերթը։

—

«Нов. Врем.»-ում կարդում ենք «Ծերունի պրոֆեսօրի» հետևեալ նամակը. «կեանքիս վերջին օրերում անցկացնելով մի շրջան, երբ նորից գնահատութեան են ենթարկվում բոլոր արժէքները, զգում եմ ինձ անվերջ երջանիկ, զգալով, որ այդ արժէքներից գոնէ մէկը չէ կորցրել իր հմայքը։ «Հայրենիքը», ինչպէս և առաջ, մնացել է այն թեաւոր բառը, որ թեաւորում է մարդկանց քաջագործութիւններ և անձնազոհութիւն անելու։ Հայրենիքը՝ առաջվայ նման այն սեղանն է, որին ծառայելը հանում է մարդուն իր ջղերիհիւթը ծծող ամենօրեայ էգոիզմի միջից։ Իմ նախնիքները դնում էին այդ սեղանի վրա միայն իմ խնայողութիւնները։ Դեռ 8 տարեկան երեխայ էի, որ Կրիմի պատերազմի համար ուղարկեցի 3 ռուբլի, և այդ չնչին գնով գնեցի իմ կեանքի ամենափայլուն յիշողութիւններից մէկը։ Այժմ նուիրում եմ 3000 ր., սաստիկ ցաւելով, որ

արխիւում պահվի. այդ չէ կատարվում մեր հայ ու թուրք գիւղում։

Մի ուրիշ օրինակ. գիւղացին վճարում է իր հարկը. հարկահանը արձանագրում է իր «դաւթարում». թէև օրէնքով նա պէտք է անդորագիր տայ գիւղացուն, բայց շատ դէպքերում շատ խեղճերի, օգտուելով նրանց միամտութեամբ, չէ տալիս։ Անցնում է մի երկու տարի. հարկահանի վրա կուտակվում են պարտքեր. հասարակական փողերը շնորհիւ իրանց ընածին քաղցրութեան, որից յափշտակում են ոչ միայն գիւղական հարկահանները... կուլ են գնում. իր եռամեակում առանց էն չի, որ հարկահանը մի-երկու հարիւր կուլ չի տայ։ Նրանից հաշիւ են պահանջում, փող են ուզում. առանց խղճահարվելու նա յայտնում է, որ հասարակութեան այսինչ անդամներ (ցոյց է տալիս այսպիսիներին, որոնք մատչելի են իր ատամներին) այս ինչ տարվայ այս ինչ կիսամեակի կամ քառամեակի հարկը չեն տուել դեռ։ Պահանջում են վերջիններից. նրանք Աստուած, երկինք են կանչում, երդվում են բոլոր սրբերով. նրանց՝ չեն հաւատում. նրանք «դաւթար» են պահանջում, որի մէջ իր ժամանակին արձանագրվել է նրանց վճարը։ Հարկահանը իր գինեթաթախ աղլուխում «դաւթարներ» մեծ ու փոքր, շատ ունի կապած. նրանց դէս ու դէն քրքելուց յետոյ յայտնում է, որ պահանջվող «դաւթարը» անցեալ աշնան տուել է տանուտէրին հին «դաւթարների» հետ պահելու. տանուտէրն էլ յայտնում է, որ ինքն այն ժամանակ «սալդաթի պատճառով» գնում էր քաղաք, «դաւթարը» տուաւ «սուդիա» Թորոսին. «սուդիա» Թորոսն էլ յայտնում է, որ ուլթ-ինն ամիս է, ինչ նա «դաւթարը» տուել է «պամօշնիկ» (տանուտէրի օգնական) Ոսկանին. Ոսկանը յանկարծ միտն է գցում, որ նա, ճշմարիտ է, «դաւթարն» ստացել է, բայց էլի հա տուել իրան «ըզբօրչիկ» (հարկահան) Արզմանին։ Ոսկանի ու Արզմանի մէջ այդ պատճառով տեղի է ունենում մի դիալօգ, ամենաքնոտիր ու ազդու ուշունցներից հիւսված, ու վերջում տաքացած Արզմանը յայտնում է, որ նա բացի իր ձեռքի մատեաններից ուրիշ «դաւթար-մաւթարի» տեղ չի գիտում... «Դաւթարի» անհետանալը այն հետևանքն է ունենում, որ խեղճ գիւղացիները ստիպված են լինում կրկին անգամ վճարել իրանց հարկը։ Այդպիսի դէպքերը մեր գիւղերում շատ սովորական են ու շատ յաճախակի։

Գիւղացիներին պէտք է ժամանակին յանձնել դատարանական հաստատութիւնների վճիռների պատճէնները (նրանց բացակայութեան ժամանակ կայացրած) ու հրաւիրագրերը։ Կանոնաւոր գործող գիւղական դիւանի բացակայութեան պատճառով այդ բանը կատարվում է նոյնպէս շատ անփոյթ, անկարգ, ու գիւղացին զրկվում է ժամանակին վճռաբեկ գանգատ տալու իրաւունքից, տալիս է տուգանք նշանակած ժամանակին դատարան չը գնալու համար, այդպիսով տուժում է նա իր գիւղական պաշտօնեաների անփութութեան ու անհոգութեան շնորհով։

Գիւղական դատարանն էլ յետ չի մնում տանուտէրից ու նրա դիւանից իր անփոյթ, անկարգ ու յաճախ ապօրինի գործավարութեամբ, բայց նրա մասին մանրամասն մի ուրիշ անգամ։

Այդպիսով պարզ է, որ մեր գիւղական տանուտէրները, դատաւորները ու այլ պաշտօնեաներն ու գործիչները պէտք է ամեն ճիգ թափեն, պէտք է շատ լուրջ աշխատեն կարգաւորելու ու կանոնաւորելու գիւղական գործավարութիւնը, առանց որի մեր գիւղերի համար անօգուտ կը մնան թէ համայնքների ընդլայնացումը և թէ որ և է ուրիշ բարեկարգութիւն, նոր օրէնսդրութիւն ու կանոնադրութիւն։ Այդ բանի վրա մեր նահանգական ու գաւառական իշխանութիւնները լուրջ ուշադրութիւն են դարձրել. համայնքների ընդլայնացման գլխաւոր պատճառներից մինն էլ դա է։ Ցոյս կայ, որ իշխանութեան ու գիւղական հասարակութիւնների հաւաքական ոյժով ու փոխադարձ աջակցութեամբ այդ հինաւուրց չարիքը՝ քաօսական, անկարգ, ապօրինի գործավարութիւնը՝ կը վերանայ քիչ-քիչ ու մեր գիւղերում կը հրատարակվի վերջապէս գործավարութեան օրինաւոր կարգ։

Մեր գիւղական պաշտօնեաների ուրիշ պարտաւորութիւնների մասին, որոնք շատ են անչափ ու շատ պատասխանատու, մի ուրիշ անգամ։

Ստ. Տէր-Աւետիքեան

չեմ կարող 3 միլիոն տալ։ Թող սա լինի մի կաթիլ՝ ծովի ջրի մէջ. բայց չէ՞ որ ես էլ միայն մի կաթիլ եմ ռուս ժարդկանց ծովում.«··

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են. «Տեղիս յայտնի կալուածատէր Ալէքսանդր բէկ Լալայեանցին, այսօր, ամսիս 17-ի լուսաբացին, իր ամրոցամանն շինութեան ննջարանում չարաչար տանջանքով խեղդամահ արած են գտնում։ Հանգուցեալը իր հսկայ ապարանքում մէն մենակ ամուրի կեանք էր վարում, շրջապատված թուրք ծառայողներով, որոնց դաւադրութեամբ էլ սպանվում է։ Սպանողներից մէկը, 18—19 տարեկան լեզգի, բոլոր յանցանքը իր վրա վերցնելով՝ ուղղակի գնում է բանտը և յայտնում իր կատարած եղեռնագործութիւնը։ Յիշեալ ծառայողներից առ այժմ բռնված են երեք հոգի։ Կասկածները բազմակողմանի են և բարդ։ Ցոյս կայ պոլիցիան իր բոլոր ջանքը գործ դնելով եղեռնագործութեան մանրամասնութիւնները կը պարզէ, որին գրեթէ ամբողջ քաղաքը սպասում է հետաքրքրութեամբ։ Ոսկեղէնի, դրամի և ակնեղէնի մի մասը յափշտակված է»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Եղանակը լաւ է. մեր դաշտերն ապատ են ձիւնից, ուստի փորձված գիւղացիք այս տարին լաւ չեն գուշակում՝ եթէ չը գայ նոր ձիւնը մինչև մարտ ամիսը»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Դեռ ամիս ու կէս է անցել 1904 թուից, բայց Նոր-Բայազէտում 6—7 գողութեան դէպքեր են եղել։ Չը նայած ոստիկանութեան սաստիկ հետամուտ լինելուն, գողերը ցնում են անյայտ ու շարունակում են ծակել խեղճ աղքատների տան պատերը, տանելով նրանց ամանեղէնները, չուլ ու փալասը»։

—

ԴԷՐԲԷՆԴԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 7-ին տեղիս սիրողները ներկայացրին առաջին անգամ Դերբէնդի բեմի վրա «Արշակ Բ.», Խ. Դալֆայեանի, յօգուտ տեղիս օրիորդաց պրոգիմնազիայի։ Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր։ Խաղը անցաւ աջող։ Հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ թատրոնից»։

—

ԼԱԳՕՌԷԽԻՑ մեզ գրում են. «Մի ամիս է, ինչ տեղիս անասունների մէջ ժանտախտ է երևացել (չումա), որի պատճառով և արգելված է աւանիս չորս կողմի գիւղերից սայլերի մուտքը»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Համեմատած ուրիշ տարիների հետ, այս տարի բարեկենդանի օրերը ըստ երևոյթին խաղաղ անցան մեզանում։—Նոր-Բայազէտին յատուկ փողոցային աղմուկներ, կռիւ, դալմաղալ, տուր ու դմփոց, վիրաւորանքներ գրեթէ տեղի չունեցան. ժողովրդի տրամադրութիւնը հանգիստ էր ամբողջ վերջին շաբաթվայ ընթացքում, թէև սատմոքսի հոգատարութիւնից ոչ ոք յետ չէր մնում։ Որ մեր քաղաքի ժողովուրդը պաս պահելու և այլ կրօնական ջերմեռանդութեան սիրահար է,—դրա դէմ խօսք չունենք ասելու։ Սակայն այն էլ փաստ է, որ նա զուրկ է մըտաւոր և հոգեկան զուարճութիւնից, ուստի մեր քաղաքի բազմաթիւ տէրտէրների պարտականութիւնն է այս մեծ պասի ընթացքում քարոզ խօսել ժողովրդի համար մեր եկեղեցում։ Անցեալ տարի տեղական գործակալ վարդապետը իր իբեայի քարոզներով մի փոքր հոգեկան մխիթարութիւն ներշնչեց մեր ժամասէր հասարակութեանը։ Բայց դժբաղդաբար այժմ զրկված ենք գործակալ վարդապետից, ուստի մեր տէրտէրներից մէկն ու մէկը թող փոխարինէ նրան և կենդանի խօսքով քարոզէ մեր քաղաքի խղճուկ հասարակութեանը, աղնուացնելով նրա մտաւոր և բարոյական ճաշակը, մի հասարակութիւն, որ զուրկ է թէ ուսումից, թէ զարգացումից և թէ ուրիշ կրթական միջոցներից»։

—

ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 6-ին, հայոց ուսումնարանի դահլիճում, կայացաւ ռուս օպերայի երգիչ պ. Մ. Գ. Զանպապեանի (տենօր) կօնցերտը, տիկին Զիժօվսկայա (ակկոմպանիմենտ) և Ջութակահար Եա. Ս. Մագալինների բարեհաճ մասնակցութեամբ։ Կօնցերտից ստացված արդիւնքի 25%-ը պարոնը յատկացրել է տեղիս հայոց ուսումնարանի օգտին։ Մուտքը հասաւ 115 ռուբլու։ Պ. Զանպապեանը բաւական աջող կերպով կատարեց զանազան կտորներ. «Trio Ջութակի հետ» Դէնցի հեղինակութիւնը, մի հատուած «Ռուի Բլաս» օպերայից և այլն։ Հայկական երգերից երգեց. «Արի իմ սոխակ», «Հազար երանի», «Այ վարդ» երկու անգամ, «Ծիծեռնակ» և «Կռունկը», որը հանդիսականների բուռն արտայայտված ցանկութեամբ կրկնվեց երկու անգամ։ Պարոնն աւարտել է Մոսկվայի կոնսերվատորիան։ Զայնը բաւական ախորժելի է, կակուղ, սակայն նրան պակասում է ձայնի նուրբ մշակումը, որ և չէ կարելի պահանջել նորաւարտ երգչից։ Ցածր ձայները նա առնում է բաւական մաքուր, ազատ և հնչուն, այն ինչ բարձր բեգիստրի նոտերը հնչում են խուլ»։

—

ՔԻԻՐԴԱՄԻՐԻՑ մեզ գրում են. «Պ. Ալի Ալիեվից (Ֆելդշէր) տեղեկանում ենք, որ 1903 թ. ապրիլի 15-ից մինչև ներկայ տարվայ յունվարի 1-ը, թէ Քիւրդամիրից և թէ ուրիշ մօտակայ գիւղերից նրա օգնութեան են դիմել 3822 հիւանդ, որոնցից մալարիայով՝ 944 հոգի, թոքախտով 31, վներական հիւանդութիւններով 88 (կայ և սիֆիլիս) և, վերջապէս, ուրիշ թեթև ու ծանր հիւանդութիւններով 2759 հոգի։ Վերոյիշեալ տողերում աչքի է ընկնում մալարիայով և վներականախտերով հիւանդացածների թիւը, բայց մենք կարծում ենք, որ վներական հիւանդութիւն ունեցողների թիւը աւելի շատ է, որովհետև ամօթ համարելով չեն դիմում բժշկական օգնութեան»։

—

Շուշու գաւառի ՓԻՐԶԱՄԱԼ գիւղից մեզ գրում են. «Այս տարի մեզանում գարունը սովորականից աւելի շուտ է սկսվում, այնպէս որ ահա ամբողջ մի ամիս է, ինչ եղանակները գարնանային են։ Տեղացիները սկսել են գարնանային վար ու ցանքը։»

—

ԱՍՏԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Հինգշաբթի, փետրվարի 5-ին, Վարդանանց տօնի օրը, նախկին տարիների նման, տեղիս հայոց չորեքդասարանեան օրիորդաց ուսումնարանի դահլիճում տեղի ունեցաւ Վարդանանց տօնի հանդէսը և նոյն ուսումնարանի տարեկան ակտը։ Ներկայ էին թեմական առաջնորդ Աբիստակէս արքեպիսկոպոսը, ժողովրդական դպրոցների և տեղիս բէալական դպրոցի վերատեսուչները, իգական գիմնազիայի տեսչուհին և երկու սեռի հայ հասարակութիւն։ Հանդէսը բացվեց «Նորահրաշ» շարականով, որը երգեց աշակերտուհիներից կազմված երգեցիկ խումբը. ապա կարդացվեցին դպրոցի ուսումնական և տնտեսական մասի հաշիւները, որոնցից երևաց, որ ուսումնարանը անցեալ 1902—1903 ուսումն. տարում ունեցել է 12 դասատու, 119 աշակերտուհի, որոնցից աւարտել են 9 հոգի և ծախս աւելի քան 5 հազար ռուբլի։ Ուսումնարանը ունի 3 պատրաստական և 4 հիմնական դասարաններ և պահպանվել է եկեղեցական զումարներով, սեփական դրամագլուխների տոկոսներով, ուսման վճարներով և այլ եկամուտներով։ Հաշուից յետոյ կարդացվեցին մի քանի ոտանաւորներ և երգվեցին երգեր հայերէն և ռուսերէն լեզուներով։ Հանդէսից յետոյ տեղի ունեցաւ աշակերտուհիների պատրաստած և զանազան անձերի նուիրած ձեռագործների վաճառումը, որից ստացվեց մօտ 200 ռուբլի մուտք։ Խորին շնորհակալութեան արժանի են այն բոլոր անձինք, որոնք այս կամ այն կերպով նպաստեցին ձեռագործների վաճառման գործին»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Եապօնիայի եւ Ռուսաստանի այժերը պատերազմական բեմի վրա։ Գերմանական զինուորական օրագիր «Militär Wochenblatt» հետեւեալ կերպով է հաշվում եապօնացիների այժերը պատերազմական բեմի վրա. 156,000 սուին, 8,850 սուր (59 էսկադրօն), 117 բատարէա—702 թնդանօթ, ընդամենը 165,880 հոգի։

Ինչ վերաբերում է Ռուսաստանի այժերին, «Русскія Вѣдомости» լրագրի հաշուելով, նրանք հասնում են 240,000 հոգու։

Եապօնական զօրքի պաշարեղէնի վիճակը։ Անգլիական «Դայլի-Մայլ» լրագիրը նկարագրում է եապօնական զօրքի պաշարեղէնի և ուտեստի կազմութիւնը։ Ուտեստը բաղկացած է բրնձից և մսային կօնսերվներից, էկս ֆունտանոց արկղիկների մէջ։ Ութսուն հատ այդպիսի արկղիկներ դրվում են մի արկղի մէջ և ամեն մի զրաստ կամ ձի տանում է երեք այդպիսի արկղ կամ երկու քսակ բրինձ, ամեն մէկը վաթսուն ֆունտանոց։ Ամեն մի զինուոր կրում է իր վրա բրնձի վեց պահեստի և երկու պատրաստի բաժին։ Զօրքերը ունեն ալյումինից շինված կաթսաներ և ամեն մի բատալիոն ունի ինն ժեշտի կաթսաներ կերակուր եփելու համար։

Պատերազմական գործողութիւնների սկզբից, Նագասակիից ուղարկվել են ընդամենը քառասուն փոխադրական նաւեր։

Եապօնացիների պատրաստութիւնները։ Անգլիական լրագիրները հաղորդում են, որ Եապօնիայում եռանդուն պատրաստութիւններ են տեսնվում, որպէս զի մեծ քանակութեամբ զօրախմբեր ափ իջեցնեն Տալիէնվանում։ Վերադարձած փոխադրական նաւերը գնում են նոր զօրքեր ընդունելու Ուժինա, Խիրոշիմի մօտ։ Ուժինան պէտք է ծառայէ հիմնական գործողավայր զօրքի և նաւատօրմի համար։

Եապօնացիները տարածում են Չինաստանում պրոկլամացիաներ ժողովրդին գրգռելու նպատակով։

Վերջին տեղեկութիւններին նայելով, եապօնական զօրքի առաջխաղացութիւնը դէպի Կօրէայի հիւսիսային սահմանները բազմաթիւ արգելքների է հանդիպում։ Հալուցքը վրա գալով՝ ճանապարհները Կօրէայում փչացել են և այդ պատճառով ուտեստի փոխադրութիւնը սաստիկ դժուարացել է։ «Standard» լրագիրը հաղորդում է, որ Պինկ-Եանգում տիրում է սարսափ, որովհետև Կօրէայի սահմաններում երևացել են ռուս կօզակներ։ Սէուլում սպասում են մօտ ապագայում վճռական ճակատամարտերի Կօրէայի հողի վրա։

Գերմանիայի դերը ռուս-եապօնական ընդհարման մէջ։ Առհասարակ, Գերմանիայի բռնած քաղաքականութիւնը ներկայ պատերազմի ժամանակ զանազան մեկնաբանութիւնների առիթ է տալիս։ Կանցլէր Բիւլով նորերս մի խօսակցութեան մէջ հետևեալն է հաղորդել Պարիզի թերթերից մէկի թղթակցին. «Գերմանիայի բոլոր քաղաքական կուսակցութիւնները, բացի սոցիալիստներից, համաձայն են կառավարութեան հետ այն բանում, որ մեր արևելեան դրացու հետ ունեցած բարեկամական յարաբերութիւնների շարունակութիւնը համաձայն է մեր պատմութեան և մեր սովորութիւններին։ Այդ բարեկամական յարաբերութիւնները ուղղված չեն Անգլիայի դէմ. նրանք չեն արգելում մեզ ճանաչել եապօնական ազգի ոգևորութիւնը։ Բոլորովին Գերմանիայի շահն է անփոփոխ պահպանել միատեղ երեքպետեան և երկպետեան դաշնակցութիւնների գոյութիւնը։ Եթէ «գերմանական համաշխարհային քաղաքականութիւն» խօսքը թարգմանում են «գերմանական նուաճողական քաղաքականութիւն» խօսքով, դա սխալ է։ Մենք չէզոք ենք և ցանկանում ենք մնալ չէզոք և այն բոլոր գեղեցիկ երկիրները, որոնք, իբր թէ, կամենում ենք ձեռք բերել կայսրութեան համար, միայն ցնորքներ են։ Մեր ամբողջ համաշխարհային քաղաքականութիւնը կայանում է նրանում, որ նոր շահաւէտ վաճառականներ բանանք գերմանական առևտրի համար։»

Ֆրանսիայի ծովային զօրութիւնը։ Ծովային մինիստր Պելլետան յայտնել է, թէ նա չէ մտածում, որ Ֆրանսիայի և որ և է մի այլ պետութեան մէջ կարող է զինաւորված ընդհարում լինել։ Սակայն նա կարծում է, որ ֆրանսիական նաւատօրմը պէտք է կազմ և պատրաստ լինի ամեն տեսակ պատահականութեան հանդէպ։ Ներկայումս, ֆրանսիական նաւատօրմը հինգ զրահաւոր ունի նորագոյն կազմութեամբ, իսկ մի քանի շաբաթից յետոյ, հինգ հատ նորերը կաւելանան։ Ինչ վերաբերում է ֆրանսիական էսկադրային հեռաւոր-Արևելքում, նա, նոյն իսկ այժմ, ոչնչով ստոր չէ Անգլիայի, Միացեալ-Նահանգների և Եապօնիայի էսկադրաներից, այնու ամենայնիւ ծովային մինիստրութիւնը դարձեալ չորս հատ-ականանաւ ուղարկեց այդտեղ, որպէս զի աւելացնէ Ֆրանսիայի պատերազմական այժերը Արևելեան Ասիայում։ Բացի դրանից, Ֆրանսիան այնպիսի միջոցներ է ձեռք առել, որոնք անհնարին կը դարձնեն թշնամու յարձակումը Հնդկա-Չինաստանի վրա։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 փետրվարի

ՇԱՆԴՀԱՅ։ Եապօնական խուզարկու դատարանը կանոնաւոր ճանաչեց մի քանի ռուսական առևտրական նաւերի գրաւումը։ Տրված է մի ամիս ժամանակամիջոց՝ բոլոր տալու համար։ Այդ նաւերից երեքը չը գիտէին, թէ դիպլոմատիական յարաբերութիւնները խզվել են և նրանք բռնվել են պատերազմի յայտարարութիւնից առաջ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ («Բէյտ. գործ.»)։ Դէպ քննում էր ռուսաց դեսպանի հետ ամերիկական մամուլի դէպի Ռուսաստանը ունեցած թշնամական վերաբերմունքի հարցը։ Ամերիկացիների դժգոհութեան պատճառը այն իրողութիւնն է, որ Ռուսաստանը չը դատարկեց Մանջուրիան հոկտեմբերին։ Կասսինին յայտնեց, որ Մանջուրիայից դուրս գալը անհնարին է։

ՎԻԵՆՆԱ։ Սերբիական կառավարութիւնը յանձնարարեց իր Պետերբուրգի և Վիեննայի դեսպաններին պաշտօնապէս հաղորդել ռուսաց և աւստրիական կաբինէտներին, թէ Սերբիան հաստատապէս որոշել է խափանել այն ամենը, ինչ որ կարող է արգելք հանդիսանալ բէֆորմների ծրագրի իրագործման և ամեն բան անել, ինչ հնարաւոր է, որ այդ գործը կատարվի։ Սերբիական կառավարութիւնը հաղորդեց իր այդ վճիռը բոլգարական կառավարութեան, տուեց սահմանային իշխանութիւններին խիստ հրահանգներ, որ աջակցութիւն ցոյց չը տան ապստամբական շարժման և յանձնարարեց Հին-Սերբիայի հիւպատոսներին այդ մտքով ազդել ժողովրդի վրա։

ԼԻՕՆ։ Արքեպիսկոպոս կարդինալ Կուլլին կանչված էր պետական խորհուրդը՝ բացատրութիւն տալու այն բողոքագրի առիթով, որ նա, ուրիշ կարդինալների հետ միասին, ուղղել էր հանրապետութեան նախագահին։ Կուլլին յայտնեց, որ չի գնայ պետական խորհուրդը։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Փետրվարի 18-ին սկսվեց երկաթուղու վագոնների անընդհատ շարժումը Բայկալի սառուցի վրայով, ձիաքարշով։

ՏՕԿԻՕ։ (Բէյտերի գործ.)։ Կայացաւ կաբինէտի արտակարգ նիստը, ուր քննվում էր այն հարցը, թէ ինչպէս գտնել միջոցներ պատերազմական կարիքների համար։ Կաբինէտի ենթադրութիւնները կը ներկայացնվեն պարլամենտի հաստատութեան։ Գործը վերաբերում է 700 միլիոն իէն աւելացնելուն հարկի վրա և, բացի դրանից, միաժամանակ, աւելացնել հողային հարկը և ծխախոտի ու ոգելից ըմպելիքների տուրքերը։ Ծրագրվում է մի քանի նոր հարկեր հաստատելը։ Կայսերական հրովարտակով պարլամենտը նիստի է կոչվում փետրվարի 29-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Օրէնսդրական Հաւաքածուի» մէջ տպված է 7 և 8-րդ արևելեան-սիբիրեան հրացանաձիգ բրիգադների կանչվելու մասին, ինչպէս և փոխարքայի ժամանակաւոր շտաբի կազմման մասին Հեռաւոր-Արևելքում։ Փետրվարի 19-ին, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորօվնա, Մեծ Իշխանուհի Օլգա Նիկօլայեվի հետ այցելեցին Իշխանուհու անունով կազմված սանիտարական գնացքը, որ ուղևորվում է Հեռաւոր Արևելք փետրվարի 20-ին։

ՄՈՒԿԴԷՆ։ Պատերազմի բեմի վրա ամեն բան անդորր է։

20 փետրվարի

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ։ «Новый Край» լրագրի թղթակիցը գալիս է այն եզրակացութեան, թէ բաւական է բախտը երեսը շուռ տայ Եապօնիայից, որ կօրէացիների դարաւոր թշնամութիւնը դէպի իրանց հարստահարիչները դարթնէ։—Գործերի վիճակը անփոփոխ է։

ՄՈՒԿԴԷՆ։ Պատերազմի բեմի վրա ամեն բան անդորր է։

ԲՈՒԽԱՐԵՍՏ։ Հրատարակված է յայտարարութիւն Բումինիայի չէզոքութեան մասին։

ՊԱՐԻԶ։ Վճռաբեկ դատարանի քրէական պալատում սկսվեց Դրէյֆուսի դատի վերաքննութեան գործը։ Զեկուցանողը բացատրում է գործի ընթացքը և ասում է, որ Բէնի դատաստանական դատի ժամանակ շատ դժկամութիւններ չեն հաղորդված դատաւորներին. այդպիսի դժկամութիւնների թւում կար մէկը, որով ապացուցանվում էր, թէ «cette canaille de D» (այս Դ անպիտանը) խօսքը չէր կարելի վերաբերել Դրէյֆուսին։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների պալատը։ Հարցապնդման վրա, պարլամենտական քարտուղար Պրոտիմէն պատասխանում է, որ բրիտանական նաւատօրմը Հեռաւոր Արևելքում բաղկացած է 5 զրահաւորներից, 4 կրէյսէրներից առաջին կարգի, 8 թնդանօթանաւերից, 9 կոտորիչ ականանաւերից, 4 ականանաւերից, 12 գետային թնդանօթային նաւակներից։—Թագաւորը թեթև կերպով վրաստից հիւանդացել էր։

ՎԻԵՆՆԱ։ Բոլորովին անհիմն են լրագրական այն լուրերը, թէ աւստրօ-ունգարական կառավարութիւնը կարգադրութիւններ է արել զօրքը զէնքի կոչելու, ինչպէս և անհիմն է այն

լորը, թէ զինուորական մինիստրութիւնը պընդում է շուտով կազմել երկու դունայական մօնիտեօր և կենտրօնացնել Բուդապէշտում դանուբեան շոգենաւային ընկերութեան նաւային կազմը։

ՏՕԿԻՕ։ Աօկի փոխ-կոմսը կը գնայ Կօրէա ներքին կառավարութեան մէջ բէֆօրմներ մտցնելու։

ՋԻՖՈՒ (Բէյտէրի դրծ)։ Այստեղ եկած մի շոգենաւ հաղորդում է, որ Զէմուլպօի մօտ ընկղմվել է եապօնական մի զրահաւոր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հեռաւոր Արևելքից չեն ըստացվել պաշտօնական տեղեկութիւններ փետրվարի 19-ին։ Հեռագիրը դեներալ-մայօր Ֆլուգից. «Ցանկալի է այստեղի զօրքերի համար ստանալ ճերմակեղէն, ծխախոտ, գլանակ, կօշիկ, ասեղ, թել, կոճակ, սապօն, պօստի թուղթ և ծրար։ Տաք շորերի պէտք չը կայ»։

—

Առեւտրական - հեռագրական գործակալութիւնից

20 փետրվարի

ՊԷԿԻՆ։ Եապօնացիների բռնած «Արգուն» շոգենաւից եկած ռուս ճանապարհորդները տեսել են փետրվարի 3-ին Սասբօ բերված զրահակիրը, ըստ երևոյթին «Աղուսա»։ Բերված է նոյնպէս ՀԷասված կրէյսերը առանց խողովակների, տախտակամածի և կայմերի։

ՋԻՖՈՒ։ Այստեղ իմացել են, որ Վէյ-Խայ-Վէյի մօտ կործանվել է եապօնական կրէյսերը։ Այստեղից տեսել են, ոչ հեռու նաւահանգստից, պայթած եապօնական ականանաւը։

ԼՕՆԴՕՆ։ «Daily Chronicle» լրագիրը հաղորդում է, որ եապօնացիները յետաձգեցին Պօրտ-Արտուրի վրա յարձակումը երկու շաբաթով և դիտաւորութիւն ունեն նախապէս ափ իջնել Դալնիի մօտ, քանդել երկաթուղին, առանձնացնել Պօրտ-Արտուրը և թուլացնել նրան ՀՀասներով։

—Լուրերի համեմատ, Զան և Մա գեներալները բողոքեցին Զինաստանի չէզոքութեան մասին և պահանջում են կառավարութիւնից դաշնակցութիւն Եապօնիայի հետ։

—Եապօնացիների ափ իջնելուն Ցինվանդաօում խանգարեցին չինական իշխանութիւնները, չէզոքութեան խախտումն համարելով այդ։

—«Stantard»-ին Տօկիօից հաղորդում են, որ արտասահմանեան թղթակիցներին թոյլատրված է ուղեկցել զօրքին. թոյլտուութիւն ստացան երկու երկու անգլիական և ամերիկական, 5 ֆրանսիական և 2 գերմանական թղթակիցներ։

—«Expresse» լրագիրը հաղորդում է, որ Կօրէում Եապօնիան հիմնել է գերիներին օգնող բիւրօ. մտադրութիւն կայ գերիների ցուցակ պահել երկու կողմից ևս, որոնել գերի եապօնացիների բարեկամներին, փող և բոլոր անհրաժեշտը ուղարկել նրան և, Ռուսաստանի համաձայնութեան դէպքում, աջակցութիւն ցոյց կը տրվի և ռուս գերիներին՝ հայրենիքի հետ յարաբերութիւն պահպանելու համար։

—«Daily Telegraph» լրագիրը մատնացոյց է անում, որ չինացիների համակրութիւնները դէպի եապօնացիները աճում են։ Տեանցզինում խօսում են եապօնացիների ափ իջնելու մասին Պլաստուն ծոցում։

Պարիզից տեղեկացնում են, որ Զէմուլպօում ափ իջան եապօնական գվարդիան և գլխաւոր շտաբը։

—Եապօնական դեսպանութեանը Տօկիօից պաշտօնապէս տեղեկացրել են, որ կօրէական զօրքերը չեն մասնակցում եապօնացիների պատերազմական գործողութիւններին։

—Կիսապաշտօնապէս հաստատվում է, որ Ամերիկայի Միացեալ-Նահանգների առաջարկած հարցը Զինաստանի չէզոքութեան մասին —Գերմանիայի ձեռներէցութիւնն է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՌՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

**Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ**

(Կուկիա, վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Մ. Գ. ՍԻԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ԲԵԲԻՆՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹՈՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։

Ա. Գ. ԳՍԲԱԳԵՏՅԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթուև վեներական հ.

Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), ներքին և վեներական հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԶՆՐԲՈՒՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Գ. Ա. ԹՈՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Բ. Ե. ՆԱՒՍՄԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.

Վճարը 10 կ. շաբաթները ձրի։ Համախորհրդի (Լիօն) սիլիումի և օպերացիայի համար առանձին։

Օ. Ա. ԱՌՎԱՆԻՑԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

---

ԱՐՏԻՍՏԻՊԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, փետրվարի 21-ին

Ի նպաստ Թիֆլիսի Հայոց Բարեգ. Ընկերութեան

(Զուտ արդիւնքի 10%-ը կարմիր խաչի օգտին)

Բարեհաճ մասնակցութեամբ իշխ. Մ. Բեբուտովայի, պ. Վանշիրի, դերասանուհի Վարդուհու, պ.պ. Վ. Վիլշաու, Մ. Զաբարի, Լ. Քալանթարեանի, դերասան Գ. Միրզեանի, պ. Մելիք-Ղարագեօզեանի, տիկ. Վ. Մամուլեանի, դերասանուհի Նօնիկեանի, պ. Դ. Փուղինեանի, տիկ. Յ. Սպենդիարեանի, պ.պ. Յ. Ստեգերի, Ր. Տիգրանեանի, Օ. Շմիրլինգի և դերասան Ալիխանեանի, կը տրվի

I

**ՏՕՆԱԾԱՌ**

կոմեդ. 1 գործ. հեղ. Նեմիրովիչ-Դանչենկոյի Թարգմ. Տ. Յովհաննիսեանցի։

Մասնակցում են. Տիկ. Վ. Մամուլեան, Յ. Սպենդիարեան պ. Մ. Վանշիր, տիկ. Ս. Ճաղարբէգեան։

Բէժիսօր Զաբար

II

**ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ**

Մասնակցում են. Տիկ. Սպենդիարեան, իշխ. Մ. Բեբուտովա, պ.պ. Վ. Վիլշաու, Յ. Ստեգեր, Գ. Մելիք,Կարագեօզեան, Լ. Քալանթարեան. դաշնակցում է պ. Դ. Փուղինեան։

III

**ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ**

1. «Տելեմաք և Կալիպսօ» նկար Schopin-ի, 2. «Սօկրատէս և Ալկիվիադէս» նկար Վէնեգի. 3 պատկեր.—«Հաւաս, յոյս և սէր»։ Պատկերները դնելու է պ. Օ. Շմերլինգ, բարեհաճ մասնակցութեամբ՝ իշխ. Մ. Անդրօնիկովայի, օր. օր. Լ. Բեխտերեվայի, Ն. Վեսելովզորովայի, Օ. Գրուզենբերգի, Տ. Գուլիշամբարովայի, Ա. Կօրգանովայի, Կ. Կոլենկօի, Ն. Խոսրօեվայի, Ռ. Խոսրօեվայի, Ե. Օրնեստկայի, Ա. Ռայեվսկայի, պ.պ. Ս. Պօլտարացկու և Վ. Լիւբոմիրսկու։

IV

**ՎԵՐՔԶԿԱՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ**

Վաղվվել 1 գործ. հեղ. Լիսենկո-Կոնիչի, Թարգմ. Գ. Աւետեանի։

Մասնակցում են. Տ.տ. Վարդուհի, Նօնիկեան, Ս. Ճաղարբէգեան, պ.պ. Ալիխանեան, Միրզեան և ուրիշներ։

Բեժիսօր Զաբար

Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։

Տոմսակները ծախվում են թատրօնի կասայում։

(հ. ո. շ.) 3—3

---

**Ստավրոպոլի** հայոց ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու համար հարկաւոր է մի փորձված խմբապետ, որ գիտենայ եւրօպական ձայնագրութիւն և նուագել դաշնամուրի վրա։

Պայմանների մասին դիմել՝ Ставрополь. губерн., священику Сааку Теръ-Ованесьянцъ.

1—5

---

ԲԺՇԿԱՊԵՏ

**Գր. Տէր-Գրիգորեանց**

Վերադարձաւ արտասահմանից և նորից ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններին. 154. Միքայէլեան պրօսպէկտ, տելեֆոն 825.

(ամեն օ.) 3—15

---

ԲԺԻՇԿ

**Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ**

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին, ամեն օր առաւօտեան 12—2, երեկոյեան 5—6։ Վեռ Վանքի փողոց, տուն Կուզանովի, Բախչիեվի դեղատան կից։

---

ԲԺՇԿԱՊԵՏ

**Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ**

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելիամինովսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։

20—100

---

Լոյս տեսաւ

Մ. ՂԱԶԱՐԵԱՆՑ

**ԱՅՍՏԵՂ ԷԼ ԱՅՆՏԵՂ ԷԼ**

(Մի պատկեր հայ դաղթականների կեանքից)

Մաքուր տիպ (Ս.-Պետերբուրգ «Գուշկինեան» տպարանում տպած) 56 մեծադիր երես։

Գինն է 10 կոպեկ

Դիմել՝ գրախանութ «Գուտտենբերգ» 2—5

---

Լոյս տեսաւ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

**ԻՏԱԼԻԱՅՈՒՄ**

Քսանն եւ ինն պատկերներով (արտասահմանում պատրաստված)

Գինն է՝ 1 ր. 50 կ.

Դիմել՝ «Գուտտենբերգ» եւ «Կենտրօնական» գրավաճառանոցներին, կամ հեղինակին՝ Тифлисъ, Редакція «Мурчъ» 4—10

---

**ԲԻՒԺՕ ԳԻՆԻ**

(Vin de Bugeaud)

Տօնիքական և մնդարար—քինքի նայի և կակաօի գինի։

—

Ֆրանսիական տօնիքական գինին առողջացնում է երեխաներին, կանանց, ծերերին և բոլոր թուլացածներին։

—

Գտնվում է Ռուսաստանի դեղատներում։

—

Ծախվում է մեծ քանակութեամբ P. Zebeault et C—ie 5, rue Bourg-l'Abbé, Paris.

(2.) 1—12

---

Բարձր դասակարգի կանայք ինչպէս և գեղեցկութեամբ ամենանշանաւոր դերասանուհիները հրաժարվեցին գործածել ԿՕՑԼԴ ԿՐԵՄ (Cold Creme), որ դառնահամ է և իւղալի տեսք է տալիս դէմքին։ Դրա տեղ նրանք գործ են ածում

**CREME SIMON**

(Կրեմ-Սիմոն) գեղեցիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չի փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի շնորհալիութիւնն ու երիտասարդական թարմութիւնը։

LA POUDRE SIMON

(Պուդր Սիմոն) La savon á la Creme Simon (Օճառ Սիմոնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները J SIMON 59 Faubourg St. Martin Paris. Մաս-մաս վաճառվում է վարսավիրների, պարֆիւմերների և դեղագործների մօտ։

(Метцль) 2. 1—15

---

# LA REVUE

(Ancienne «Revue des Revues»)

LA PLUS REPANDUE ET LA PLUS IMPORTANTE PARMI LES GRANDES REVUES FRANÇAISES ET ETRANGÈRES

Nouvelle série agrandie, sur papier de luxe, articles inédits de premier ordre, collaborateurs les plus illustres, etc, etc., parait le 1er et le 15 de chaque mois.

Un an: 28 fr.—Six mois: 16 fr.—Trois mois: 9 fr. frais de poste compris.

Les nouveaux abonnés recevront gratuitement 3 magnifiques gravures choisies parmi les chefs d'œuvre du Musée du Louvre, sur papier de Chine.

SPÉCIMEN GRATUIT SUR DEMANDE

**PARIS, 12 Avenue de l'Opéra.—Directeur: JEAN FINOT.**

P.-S—PRIX RÉDUIT POUR LES MEMBRES DU CORPS ENSEIGNANT. 2—3

---

ԿՈՎԿԱՍԵԱՆ

ԳԼԽԱՒՈՐ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ



ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ **ԳՐԱՄՕՖՕՆ** Ռուսաստանում

Թիֆլիս, Գօլովինսկի պրօսպէկտ, Էրիեանցի տուն № 7.

Մեծ պահեստ ամենակատարելագործված սալօնական և կօնցերտային գրամֆօնների։

| | | | | |
|---|---|---|---|---|
| «Մօնարխ» | A | փոխանակ | 175 ր. | 125 ր. |
| » | B | » | 150 » | 100 » |
| » | C | » | 125 » | 80 » |
| «Հրաշք» փակ, 2 երկու մեծ պլաստինկայի լարված-քով փոխանակ | | | 40 » | 30 » |
| «Շտանդարտ» փակ, 2 մեծ պլաստինկայի լարված-քով փոխանակ | | | 60 » | 40 » |
| «Գրանդ» փոքր կօնցերտային բուպօրով փոխանակ | | | 100 » | 65 » |

Մեծ պահեստ անշշուկ պլաստինկաների։

| | | |
|---|---|---|
| «Գիգանդ» (դիամետր 12). | 5 » | |
| Գրանտ «Ecstra» . . . | 4 » | |
| » սովորական . . | 2 » | 50 կ. |
| Փոքր «Ecstra» . . . . | 2 » | — — |
| » սովորական . . . . | 1 » | 20 » |
| Տամանիօ . . . . . | 10 » | — — |

Լիբրէտտօ Ա. Դ. Վեալցեվայի—30 կոպ. ալբոմը.

Մեծ քանակութեամբ անշշուկ պլաստինկաների յայտնի և նշանաւոր երգիչների, ինչպէս են.—ռուսաց, վրաց, հայոց, թուրքական, պարսկական, բարարական, լեհական, ֆրանսիական, անգլիական, իտալական, գերմանական և ուրիշները։

Մեծ քանակութեամբ բազմազան տեսակներ ռուսական և օտարազգեայ բէպէրտուարի օրկէստրներից ու երգից։

Պահեստի խանութում կայ կօնցերտային գրամմօֆօնային դահլիճ, որտեղ գրամմօֆօնով հետաքրքրվողները կարող են ամեն օր, բացառութեամբ կիրակի օրերի, առաւօտեան 8½ ժամից մինչև երեկոյեան 8 ժամը լսել ՁՐԻ ԿԵՐՊՈՎ ՆՈՐ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ։

Հին պլաստինկաների փոխելը նորերի հետ տեղի է ունենում հատը հատի հետ—փոքրերին դեղջելով 25 կ.—իսկ մեծ պլաստինկաների համար 50 կոպ.։

Պահեստի խանութում կան մասնաւոր արհեստանոցներ, որտեղ աշխատում են ամենալաւ տեխնիկներ։

**ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ**

Մեր արտադրութիւնների հետզհետէ աճող պահանջի պատճառով, վերջերս երևացին մեր ապպարատների կեղծուածներ։ Աշխատելով զերծ պահել մեր մշտական կլիէնտներին այնպիսիներին հաւատ ընծայելուց, մենք յայտնում ենք ի գիտութիւն ընդհանուրի, որ մեր ԳՐԱՄՕՖՕՆՆԵՐԸ և ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԸ օժտված են ֆաբրիկայի դրոշմով։—«ԳՐՈՂ ՀՐԵՇՏԱԿ» և մենք երաշխաւորում ենք միայն այդպիսիների համար։ Բոլոր ուրիշ ապպարատները և պլաստինկաները, որոնք չունեն վերոյիշեալ «ԴՐՈՇՄԸ», պէտք է ընդունվեն իբրև կեղծուածներ և որոնց չը պէտք է հաւատ ընծայել։

---

**ՕՏԱՐԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ** տպրանքն ուղարկվում է վերադիր վճարով նախօրօք գրաւական ստանալուց յետոյ։

Նուէթի հաշվով։ Պօստով ուղարկելը խանութն ընդունում է իր վրա կէսով չափ միայն։

**ՈՒՂԱՐԿԵԼԸ** դէպի բոլոր երկաթուղու կայարանները եւրօպական Ռուսաստանի սահմաններում (ամառը ի հաշիւ առած ջրային ճանապարհների նաւահանգիստները) կատարվում է խարնդունում է իր վրա կէսով չափ միայն։

Հասցէն՝ նամակների և փողային կօրրէսպոնդէնցիայի համար.—Գօլովինսկի պրօսպէկտ. Աբլեանցի տուն № 7։

Հասցէն՝ հեռագրների համար «ԳՐԱՄՕԿՕՄՊԱՆԻԱ» Թիֆլիս։

ՊԱԿԵՐԱԶԱՐԴ ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ և ԿԱՏԱԼՕԳՆԵՐՆ ուղարկվում և տրվում են

**ԶՐԱԽ։**

Պ.պ. գումարով գնողներին զգալի զիջում։

Գումարով պրէյս-կուրանտներն ուղարկվում են ըստ պահանջման ԱՆՑԱՊԱՂ։ 14—50